

«ԿՈՒՈՒՆԿ» ԵՐԳԻ ՏՊԱԳԻՐ ՄԻ ՀԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Հայ ժողովուրդը դարերով զրկուած իր ազատ հայրենիքից, իսկ նրա մի մասն էլ իր սեփական ջերմ ու հարազատ տունն ու տեղից, շարունակ ապրել է վախ ու սարսափի մթնոլորտի մէջ, ճաշակել է օտարութեան ու պանդխտութեան դառնութիւնները, որի պատճառներով էլ, բնականօրէն իր երգերից ոմանք, զարգացել ու երգուել են պանդխտի սրտից բխած կարօտի բառերով:

Այս երգերից մամենախօսունը, սիրտ յուզողն ու աղբուհն, «Կոռունկ» երգն է, որի բառերին ու մտքին, գեղեցիկ ձեւով ներդաշնակուած է նաեւ կարօտի զգացումներ արթնացող դրա մեղմ ու յուզիչ եղանակը:

Թէ Եօրք է յօրինուել այս երգը, կամ պանդուխտ ու նօգնհուսեան մէջ ապրող ո՞ր հայի կողմից, դժբախտաբար մինչեւ այժմ հնարաւոր չի եղել ճիշտ ու որոշ տեղեկութիւններ ձեռք բերել եւ չնայած մեր քանասէշներին ուսումնասիրութեան, հնարաւոր չի եղել անգամ վերջնականօրէն ճշտել դրա յօրինման ժամանակն ու տեղը:

Համաձայն զրչապերոում եղած օրինակների, «Կոռունկ»ը երեւում է սկսեալ 17րդ դարից, իսկ դրա տպագրութենքը՝ 18րդ դարից, որոնք գտնւում են հին ու նոր մեծ թուով երգարաններում:

Վերջին տպագրւելից յիշենք Աս. Մնացականեանի «Հայկական միջնադարեան ժողովրդական երգեր» (Երեւան, 1956 թ.), Մաննիկ Մկրտչեանի «Հայ ժողովրդական պանդխտութեան երգեր» (Երեւան, 1961 թ.) եւ Կարօ Գէորգեանի «Նոր Գնաք» երգարանը (Բէյրութ, 1963 թ.):

Վերոյիշեալ գրքերից բացի 1977 թուին, մի առանձին ուսումնասիրութեամբ, Երեւանում լոյս տեսաւ Շ. Նազարեանի ««Կոռունկ» երգը եւ նրա պատմութիւնը» խորագրով գրքոյիլը, ուր հեղինակը ընդարձակ նախաբանով անդրադարձել է «Կոռունկ» արդի յօրինման պարագաներին, նրա գեղարուեստական ու յուսական արժէքին, ապա զրչապերոում ու հին տաղարաններում եղած տարբերակների համադրումով, տալիս է երգի համեմատական բնագիւղը դրա ռուսերէն եւ անգլերէն թարգմանութիւնները, իսկ վերջում՝ Կոմիտասի, Գալֆայեանի, Սրուանձտեանի եւ մի քանի ուրիշների ձայնագրումները:

Գրքոյիլում Կ. Կոստանեանի եւ Ա. Երեմեանի գրքում ու բանասիրական յօդուածում յիշուած «Կոռունկ»ի հին տպագրութիւններից բացի, կատարում է նոր լրացումներ եւ տալիս աւելի հին զրչապերի ու տպագրւելի աղբուրներ (էջ 37):

Ա. Երեմեանը «Հայրենիք» ամսագրում (1940 թ. թիւ 9, էջ 125) պրած յօդուածից բացի, որի մասին յիշատակել է Շուշանիկ Նազար-

եանը, մի յօդուած ունի նաեւ «Վերածնունդ» օրաթերթում (Թեհրան, 1948 թ., համար 29), որին ի պատասխան եւ լրացում, փոփոխելից «Գուսան» ստորագրութեամբ մէկը, «Որն է ճշգրիտ կոռումիլ» խորագրով մի հետաքրքիր յօդուածով անդրադարձել է Երեմեանի գրութեան («Վերածնունդ» 1948 թ., 16 Մայիս) եւ վերլուծումներ անելուց յետոյ, տուել է «կոռումիլ» երկու տարբերակը, ըստ Բաղդասար Դպիրի եւ «Նոր Քնար ընդարձակ երգարան»ի¹ :

Ինչպէս յիշուեց, Նազարեանը արդէն յիշատակել է մի քանի հին՝ 1709 եւ դրանից յետոյ տպագրուած տաղարանների անունները, որոնց մէջ տպագրուած է «կոռումիլ» : Բայց բացի սրանից կայ մի ալ հին տաղարան եւս, ուր կայ «կոռումիլ»ը, որի մասին, իր ժամանակին, ալ հնամտիպ դրքերի հետ, անդրադարձել ենք «Հասկ» ամսագրի մէջ գրած մեր մի յօդուածում (1970 թ., Սեպտ-Հոկտ. թիւ 9-10, էջ 378) :

Տաղարանը, որի էջ 210-212ի մէջ տպագրուած է «կոռումիլ»ը, մի փոքրիկ դրքոյէ է, որ սկզբից, միջից եւ վերջից թերթեր են պակսում, սկզբի մասում ունի պատարագը, ինչպէս եւ ճաշու շարականներ եւ կրօնական ու ալ տաղեր, թուով 80 հատ : Երգարանի ցանկն սկսում է էջ 221ից, որի վերջի մասը, որ կարծում ենք 223-224 էջերը լինեն, պակասում է :

Այս տաղարանը, ըստ էջերի համեմատութեան եւ «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ»ի (էջ 42, թիւ 150) 1960 թուի եւ Քնարիկ Կորկոտեանի «Հայ հնատիպ գիրքը Կոստանդնուպոլսում» (Երեւան 1964 թ., էջ 111, թիւ 50) 1710 թ. տաղարաններից մէկը պէտք է լինի, բայց քանի որ այս գրքերը Վենետիկի 1684 եւ 1690ի մէջ «կոռումիլ»ը չկայ (էջ՝ 34) պէտք է մտածել, որ կարող է Ք. Կորկոտեանի յիշած 1710 թուի տաղարանը լինի, բայց քանի որ Նազարեան չի յիշատակել նման տաղարան, իսկ մի ալ անթուակիր տաղարան 384 էջով, որ ունենք ձեռքի տակ, որի սկզբի մասը թերի է եւ «կոռումիլ»ն էլ մէջը կայ ու ալ անգամ ուրիշների կողմից յիշուել է, վերջին յիշատակարանում ասուած է. «Քանզի մինչեւ ցրայս վայր քր չափ տաղարան քր տըպած է, աւ հարաւստ է եւ գեր ի վերայ ամենեցուն» :

Վերջին գրութիւնից երեւում է որ սա աւելի նոր պէտք է լինի քան իմ ձեռքի տակ եղածը, որով կարելի է եզրակացնել որ սա 1701 թուի տաղարանն է եւ թերեւս առաջինը որի մէջ տպագրուել է «կոռումիլ» երգը² :

1. Ա. Երեմեանի «Վերածնունդ»ում գրած յօդուածը, դժբախտաբար, չենք ունեցել ձեռքի տակ :
2. Թիւնք նաեւ որ «կոռումիլ» երգը կայ նաեւ Վիեննայի թիւ 643 գրադիր տաղարանի մէջ, որը գրուել է 1791 թուին (Ցուցակ ձեռագրաց, Բ. հտ. էջ 126) :

Դժբախտաբար տաղարանի մէկ թերթը՝ էջ 209–210-ը ընկած լինելով, պահասում է «Կռունկ»ի առաջին երեք տունը, որով մնում է 9 տուն, որն սկսում է «Սրտնեքնիս կամեցաւ ելամք գնացիմք» տողով եւ վերջանում Սք. Սարգսին նուիրած տունով, այսինքն մէկ տուն յետ ու առաջ է նաղարեանի բերածից:

Ստորեւ բերում ենք այդ 9 տունը, ինչ հերթականութեամբ որ տպագրուած է տաղարանում, նոյնութեամբ.

Սըրտերնիս կամեցաւ ելանք գընացանք.

Այս տուտ աստընվորից տէրտէրն իմացանք.

Աղ ու հաց կեր մարդկաց կարօտ մնացաք:

Կռունկ մեր աշխարհէն.....

Աստընվորիս բաներն կամաց կամաց է.

Միթէ Ա(ստուա)ծ լսէ գըրունքն ի բաց է,

Ղարիպին սիրտն է սուղ աչքերն ի լաց է.

Կռունկ մեր աշխարհէն.....

Ա(ստուա)ծ քեզնէ խնդրեմ մուրվեթ ու քէրէմ.

Ղարիպին սիրտն է խոց ճիկէրն է վէրէմ,

Կերած հացն է լեղի ու ջուրն է հարամ.

Կռունկ մեր աշխարհէն.....

Ոչ զլուր օրն քիտեմ ոչ ըզկիրակին.

Զարկած է զիս շամփուրն թռնած կրակին,

Այրիւս չեմ հոգար ձեզնէ կարօտ ամ.

Կռունկ մեր աշխարհէն.....

Հաւատով բարկեր եմ ներքեւս է Փշիւի,

Հոտոյն ալ չեմ գարչեր կութվի մուշկի,

Շատ հասրէաթ մնացակ անկողնու տօշկի,

Կռունկ.....

Պաղտատու կու գաս կերթաս ի Սէհրատ,

Թըխտիկ մի գըրերըմ տամ քեզ ամէնէթ,

Ա(ստուա)ծ թող վկա՛ լինի քո վէրատ.

Տարեալ հասուցանես զայտ իմ սիրելեաց³,

Կռունկ.....

3. Այս տունը մէկ տողով աւելի է, ինչպէս որ կայ մի քանի այլ օրինակներում եւս:

Գրքերում մէջ թխթիս թէ հոս մնացի,
 Օրիկ մի օրերուն զաչերս չի բացի,
 Սիրեւիք ձեզանէ կարօտ մնացի,
 Կռունկ....

Աշունն է մօտեցեր զնալու ես թաքտիր,
 Երամ ես ժողովեր հազար (ռ) եւ հարիւր,
 Ինձ պատասխան չի տուիր ելար զնացիր,
 Կռունկ մեր աշխարհէն զնա՝ հեռացի՛ր:

Այսօր զարիպութիւն միակ միաւոր,
 Հոգով եւ այլ մարմնով աս եմ մեղաւոր,
 Սուրբ Սարգիս օգնական ճերմակ ձիաւոր,
 Կռունկ....

Տաղարանում սրան յաջորդող միւս երգն է «Տաղ գանձ զարիպի»,
 Երգ ՀԳ (73), որն սկսւում է հետեւեալ տունով.

Հարիպին կեանքն է լալի ողբերգական,
 Դառն ու լեղի լի տրտմութեամբ ի նեղ զընտան,
 Յորժամ լինի օտար երկիր թափօրական,
 Հարիպն օտար ոչ ճանաչեն ոչ գիտենան:

Այս երգը, ինչպէս յայտնի է, պատկանում է Մկրտիչ Նաղաշին, որը Էդուարդ Որոնդկարեանը, մի շարք բնագրերի համեմատութեամբ 22 տունով եւ «Աստուծոյ մարդասիրին փառք յաւիտեան» սկզբնատողով, բերել է իր «Մկրտիչ Նաղաշ» աշխատութեան մէջ (Երեւան 1965 թ., էջ՝ 168): Առաջին անգամ սա տպագրուել է 1512 թուի տաղարանում 19 տունով, որը բացի զբանից տպագրուել է նաեւ մի հին՝ 18րդ դարում հրատարակուած երդարանում՝ 384 էջանոցում, որի մասին յիշեցինք վերեւում, Երգ՝ ՀԶ (76):

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ